

1894

2000

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԻՒՆ.

859.9-3
Կ-35

№ 76.

ԿԱՐՍԵՆ ՍԻԼՎԱՑ

ԵՐԿՈՒ ՀԵԲԵԱԹ

“ՀԵՇՔԵԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ”

Թարգմ. ռուսերէնից:



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Պոլաբնեանը.

Տպոգրաֆія М. Д. Рогинянца, Гог. пр., д. № 41.

1894

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառ-
ւում են ընկերութեան գրասենակում և կենդրոնական
գրավաճառաւոնցում.

1	Թաւամաղ մեղու,	թարգ. օր. Ն. Տէր.	— 40
2	Կարմիր լապտեր,	Մարկոսեան.	— 30
	Նոյնը կաղմած		— 50
3	Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա.	— 15	
4	Թովմասեղբօր տնակը	թ. օր. Ն. Տէր.	— 45
	Նոյնը կաղմած { Մարկոսեան		— 60
5	Մորեխ և նրա ջնջելու հնարները.	•	— 10
6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին		— 10
7	Մովսիսի Խորենացաւ Պատմութիւն Հայոց —	80	
8	Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսու-		
	թեան, Մօրիս Բլօքի,		— 50
9	Գամառ-Քաթիպավի բանաստ. (սպառ).	— 50	
10	Որբինզօնի պատմութիւն		— 60
11	Ուխտատրք, զործ Վիլհէլմ Հառուֆի		— 75
12	Գառնուկ և Լուսատոփիկ, Շմիդտի.	•	— 25
13	Սակեաթ-Նօվա, աղգապին երգիչ		— 5
14	Ծննդեան պատմութիւնը		— 10
15	Ազաթանգեղիակ պատմութիւն		— 1
16	Դիւզական Խալիֆայ. Ա. Արարատ.	— 50	
17	Վանակ Սազը Դէրենցի		— 75
18	Փնջիկ. զրեց Աղեքս. Արարատեան		— 20
19	Նամուս. Վէպ. գրեց Եիրվանզադէ		— 1
20	Ստեփաննոսի Տարօնեցւու Ասողկան Պատմ. տիեզերական. 2-րդ. տպադ.		— 2
21	Թիֆլիսեցւոց մտաւոր կեանքը	Գ. Տէր	1 50
	Նոյնը ընտիր թղթի վրա Աղեքս.		— 2
22	Ղետնդ պատմագիր.	•	— 2
23	Մրրազան պատմութիւն հին ուլութի, Սա- հակ քահանակ Սահակեանի.	•	— 30
24	Նոյնը ուսուցիչների համար		— 1 75
25	Սոկրատէս, թարգ. օր. Թ. Ստեփանիան.	— 10	
26	Պատմութ. Հայոց. Պալասանեանի		— 1 50

Հայ
375

Թիալիսի ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

№ 76.

ԿԱՐՄԵՆ ՍԻԼՎԱՅ

ԵՐԿՈՒ ՀԵՐԵԱԹ

«ՀԵՐԵԱՓՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ»

Թարգմ. ռուսերէնից:




ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Գ. Ռոտինանցի.

Տպոգրաֆія М. Д. Ротинанца, Гол. пр., д. № 41.

1894



Дозволенъ цензурою. Тифлисъ, 18 Мая 1894 года.



375-2003

ԱՅՐՈՒԱԾ ԱՊԱՌԱԺԸ

Ո՞րչափ հպարտ էր գեղեցկուհի Պառնան։
Եւ իրաւունք ունէր հպարտանալու, երբ այն-
պիսի խոշոր թուխ աչքեր ունէր, կամարակապ
և յօնքեր և արծուէռունդ քժիկ։ Նորա բե-
րանը մեծկակ էր, բայց սիրուն ձև ունէր, և
երբ նա խօսում կամ ծիծաղում էր՝ երկու
շարք ձերմակ առամները փայլում էին։ Նորա
և հիւսերը դլիսի վերայ կապուած էին թագի
ձևով, և գիւղացիք հանաքով նորա անունը
դրել էին «երիտասարդների թագուհի», որով-
հետև երբ լայնաթիկունք Պառնան զլուխը
յետ ձգած գնում էր խոշոր քայլերով՝ կարծես
դլիսի վերայ մի բան լինէր կրելիս։ Բայց Պառ-
նան այսպէս հպարտ չէր լինում և զլուխը
բարձր չէր պահում։ Երբ նորան մօտենում և
հետը խօսում էր Տաննասը. սորան նա լսում
էր լրջութեամբ։ Իսկ եթէ ուրիշ մէկը հա-
մարձակէր մի հանաք անել նորա հետ՝ Պառ-
նան զայրոյթից կարմրատակում էր և կծու-
պատասխանը կշռում յանդուգն հանաք անողին։

Երիտասարդները սաստիկ նախանձում էին Տաննասի վերայ, մանաւանդ երբ յացանի եղաւ, որ նա նշանադրում է Պառնայի հետ: Բայց պատերազմի ժամանակ լինելով՝ Տաննասը հարկադրուած էր զօրքի հետ Դունայ գետի մօտերն երթալ: Թէ որչափ արտասուք էր թափում Պառնան Տաննասի պատճառով՝ ոչ ոք չգիտէր.—Նա այս թագնում էր ուրիշներից, և ոչ մէկը չէր վստահանում այս մասին նրան մի բան հարցնել:

Պառնան բանն այնպէս շինեց, որ զօրքից կանուխ լուր ստացողների մէկն էլ ինքն եղաւ: Երբ առաջին ճակատամարտի մասին պատմում էին՝ Պառնան երբ լսեց՝ աչքերը մթնեցին, և նա թիկը առուեց քարէ խաչին, որ կանգնեցրած էր զիւղաբերանում ճանապարհի վերայ: Այն գիշեր քունը փախաւ նորա աչքերից, և նա ճրագը վառ թողեց, որպէս զի իրան չպատկերանան զարհուրեցուցիչ տեսարաններ—Տաննասը վիրաւոր, Տաննասը հոգեվարք, Տաննասը մեռած...

Մութ գիշեր է. նա դեռ չհանուած նստած է անկողնի եղբին և չէ նկատում, որ մէկը պատի տակով շուաքի նման անց կացաւ և այժմ պատռհանից իրան է մտիկ տալիս: Զէ նկատում

և այն, թէ որչափ ինքը գեղեցիկ է այդ դրութեան մէջ, մոայոց, սկեռած աչքերը լայն բաց արած, ձեռները ծնկների վերայ ծալած: Պատռհանը բաղսեցին. հազիւ ճիչը զսպելով՝ Պառնան տեղից վեր թուաւ, գլուխը բարձրացրեց և հայեացքն ուղղեց դէպի մութ պատռհանը: Նորան այնպէս էր թւում, թէ Տաննասի ձայնն է լսում: Այս միջոցին դրսից իրան կանչեցին.

—Պառնա, սիրուն Պառնա, եկ այստեղ, եկ ինձ մօտ: Մի վախենար, ես Տաննասն եմ:

Պառնան դրան ախը բացեց, դրս թըռաւ և զգաց, որ իրան գրկեցին: Նա յետ մղեց իրան փաթաթուած ձեռքն ու հարցրեց.

—Յիրաւի՞ դու ես, թէ մէկի գլխին փչել է ինձ հետ հանաք անել:

—Այ, շօշափիր, Պառնա, քո տուած մատանին, և ահա վզիս կախուած դրամը: Ես չկարողացայ դիմանալ, կամեցայ տեսնել, թէ ինձ հաւասարիմ ես:

—Իսկ քեզ զօրքից ով վոնդեց:

—Ի՞նձ. —ոչ ոք:

—Ոչ ոք. հապա ի՞նչպէս եկար: Միթէ պատերազմը վերջացաւ:

—Զէ, վերջացած չէ, դեռ կուում են. ես

կամացուկ ծլկուեցայ, որովհետեւ քեզ սիրում
եմ, Պառնա:

—Սիրում ես....

Նա կտրուկ կարճ կերպով ծիծաղեց:

—Բաս դու կարծում ես՝ ես կուրախա-
նամ, որ իմ սիրականս—փախստակա՞ն է: Կո-
րիր, հեռացիր աչքից:

—Ի՞չ ես ասում, Պառնա: Այդպէս ես
ուրեմն ինձ սիրում: Դու ինձ զրկում ես մա-
հուան դուռը, որ գնամ սպանութիւն:

—Գնա թէկուզ ուր ուզում ես: Ահա ես
քեզ ասում եմ, որ երբէք ես քո կինը չեմ լի-
նի: Արհամարհուած և ատելի ամուսին ունե-
նալ—այդ ես չեմ կարող:

—Դու ուրիշին ես սիրել:

—Ո՞չ, Տաննաս, ես միայն քեզ եմ սիրել
և սիրում եմ. քո պատճառով քունը կտրել է
աչքից: Բայց երազումն էլ չէի կարող այս-
պիսի բան տեսնել, որ իմ սիրածս—վատասիրտ
երկչոս է:

Նա ձեռներով երեսը ծածկեց և հեծկլտաց:

—Իսկ ես կարծում էի, թէ դու ինձ ու-
րախութեամբ կընդունես, դու ինձ կթագ-
նես...

—Ո՞հ, ամօթ, աղաղակեց աղջիկը, հա-
զար ամօթ ինձ, որ քո նշանածն եմ... Բայց

ես քեզ ասում եմ. աւելի դիւրին է որ Բուշե-
ջի սարը կրակ ընկնի ացրուի՝ քան ես քո
կինը լինիմ:

—Իսկ ես քեզ կասեմ, աղաղակեց Տան-
նաս, դու ինձ կդտնես կամ մեռած կամ հաշ-
մանդամ:

Երկու երիտասարդները կանգնած էին
գէմ առ գէմ. Նրանց աչքերը այնպէս փայ-
լում էին, որ մթնումը լոյս էին տալիս:

Յանկարծ սարի բարձրութեան վերայ եր-
կինքը շառագունեցաւ կարմիր լուսով: Նրանք
այն կողմը նայեցին: Բուշեջի սարի կճեայ գա-
գաթներից մինը կարծես բոցավառուեցաւ:
Կրակը հետզհետէ սաստկացաւ. բոցը բարձրա-
ցաւ, կայծեր սկսան ցայտել թռչող ասողերի
նման... Երիտասարդները քար կտրած կանգ-
նած էին: Հարեւան տների պատճէնները բա-
ցուեցան: Մարդիկ գոչում էին. «Անտառը կրակ
է ընկել... չէ, սարն է այրում»: Ններն ոռ-
նում էին, աքաղաղները կանչում...

Պառնան բռնեց երիտասարդի ուսերից և
ուժով հրնդեց.

—Հեռնեւ, կորիր աչքիս առջեկից, աղա-
ղակեց նա, ապա թէ ոչ ես ամօթից կմեռ-
նեմ:

Նա ներս մտաւ, դուռը վրայ զարկեց ու

փակեց և ճրագլ հանգցրեց։ Նորա սիրտը սաստիկ բարախում էր։ Նա նայում էր, թէ ինչպէս Տաննասը գաղտագողի սլլում էր աների ստուերների միջով, ինչպէս բորբոքուած վառում էր սարը, ինչպէս հետզհետէ մթնեց։ Երբ իրան ձայն տուին, որ դու ըս գայ այն հիացքին նայի՝ նա պատասխան չտուեց։

Այս օրից յետոյ ամենքը նկատում էին, որ Պառնան սաստիկ դժգոյն է։ Ժպիտն այլ ևս չէր խաղում նորա շրթունքների վերայ, որ առաջ այնքան զուարթ և ուրախ էին։ Հանաքների դէմ այլ ևս չկային այն սուր պատասխանները, որ առաջ այնպէս վարպետութեամբ նա տալիս էր։ Նա աշխատում էր լուռու մունջ, և յաճախ այնքան սաստիկ յոդնում, որ նատում էր ջրհորի մօտ և սառը ջրով զովացնում էր գլուխը։ Երբեմն նա տիսուր տրտում դիտում էր ինքն իրան ջրհորի մէջ, մէկ էլ վախեցած վեր էր նայում Բուչեցի սարի վերայ։ Գիւղացոց մէջ ձայն դուրս եկաւ, իբր թէ Տաննասը գիւղն է եկած եղել։ այս ոք և այն ոք նրան նկատել են այրուող սարի լոյսով և ձայնն էլ ճանաչել են, երբ նա խօսելիս է եղել Պառնայի հետ։

Երբ Պառնային այս մասին հարցրին նորա ճակատի վերայ քրածնքի կաթիլներ երե-

ւեցան, և շրթունքները դողդողացին։ Նա պատասխանեց. «սարը այրուելիս իմ սենեակում կարծեմ մութն էր և լոռութիւն էր տիրում»։

Պառնայի մայրը գլուխը շարժում էր և շրթունքները կծոտում և նկատում էր, որ մեր ապրած մեղաւոր դարում մեծամեծ հրաշքներ են տեղի ունենում։

Քիչ ժամանակից յետոյ լուր եկաւ, թէ մի արիւնահեղ կոիւ է պատահել։ Այս անգամ Պառնան ամենից ուշ իմացաւ այս լուրը։ Նա շտապով վագեց տուն եկաւ, մի կապոց կապեց, աղլուխի մէջ փաթաթեց մի դդում և սմինդր, և երբ մայրը անհանգստութեամբ հարցրեց, թէ ուր է գնում։ այսքան միայն պատասխանեց։

— Նուտով կվերադառնամ, մայրիկ, իմ մասին անհանգիստ մի՛ լինիր։

Ահա կռուի դաշտը, որ երեկոյեան մթընշոյում տարածուած է լայնարձակ։ Հազարաւոր զիակներ լնկած են այնտեղ. վիրաւոր ձիերը մահամերձ ցնցւում կծկում են և սատկուտում։ Պահակների պայծառ խարոյիների մօտ զօրքը հանգստանում է, ուշադրութիւն չլարձնելով կռուի դաշտեց լսուող հառաչանքների վերայ։ Զօրքի շարքերի միջով անցնում էր մի բարձրահասակ կին և բոլոր բանակում

հարցնում էր Տաննասի մասին... Նա համարձակ մօտենում էր թէ իւրայիններին և թէ թշնամիներին, ջուր էր տալիս շատերին խմելու և ուշադրութեամբ զննում էր ընկածներին: Արդէն մուժ գիշեր էր. լուսինը լուսաւորում էր ահոելի տեսարանը. բայց աղջիկը շարունակում էր պատուել կռուի դաշտում, տեղ տեղ կանգ էր առնում, ծունկ չոգում, կրծքին էր դնում մեռելի գլուխը և զարհուրելի այլանդակ դիակին վերայ փնտում էր մատանի, վզից կախուած դրամ...

Մի անդամ միայն նա սարսափահար յետ ընկրկեցաւ. կանաչք կողոպտում էին մի դիակ. երբ նրանք քաշում էին մատանին դիակի մատից՝ մատը ճարճատեց:

Նա փախաւ, բայց իսկոյն և եթ յետ դարձաւ, և մորմոքած սրտով դարձեալ շարունակեց դիակիները տնտեղել:

Ամբողջ բանակը քնի մէջ էր ընկղմուել. բայց Պառնան դեռ թափառում էր զարհուրելի դաշտում, որ լուսաւորուած էր լուսնի շողերով, և յաճախ կանչում էր մեղմիկ.

— Տաննաս...

Երբեմն երբեմն նորա կոչին իբրև պատասխան՝ հեծկլտանքներ էին լսում... Պառնան մօտենում էր, խմելու ջուր տալիս և գը-

լուխը տիրութեամբ շարժելով հեռանում: Մօտ էր առաւօտը. երկինքը սկսել էր սպիտակել, լուսինն ազօտանում էր: Մի ինչոր բան պլապլաց: Աղջիկը մօտեցաւ: Զարկուած զինուորը կիսով չափ մերկացրած էր. բայց նորա մատին պաղպում էր մի բարակ մատանի, և նա ձեռքում սեղմած բռնած ունէր մի բան, որ վզիցն էր պոկել. Նա այնպէս պինդ էր սեղմել իւր ձեռքը, որ դիակապուտները (դիակներ կողոպտուները) երեսի չկարողանալով հուպ տուած մատները բանալ՝ այդպէս թողել հեռացել էին:

— Տաննաս, աղաղակեց Պառնան, իւր մատանին ճանաչելով, և ընկաւ մարմնի մօտ, որի երեսը արիւնով ծածկուել անճանաչելի էր դարձել: Մի քանի բոպեից ուշքը վերան հաւաքելով՝ նա սկսեց լուսնալ այն թանկագին երեսը: Արտասուալից աչքերով նա տեսաւ, որ Տաննասի երկու աչքն ու քիթը սրի հարուածով ոչնչացած էին: Նկատեց նաև, որ արիւնը դարձեալ սկսեց հոսել, — պարզ էր, որ սիրելին դեռ կենդանի էր: Նա շատապով թրջեց վիրաւորի շրթունքները և վէրքերը թաշկինակով պատեց: Վիրաւորը յոգոց հանեց և իւր անունը լսելով ձեռքը թարթափեց օդի մէջ և երկար շօշափում էր Պառնայի երեսը:

— Իմ Պառնաս, շշնչեց նա հազիւ լսելի

ձայնով. թող ինձ մեռնեմ. ես կոյր եմ, ես
աշխարհիս երեսին այլ ևս պէտք չեմ:

—Պէտք ես, պէտք ես, աղաղակեց Պառ-
նան, դու իմ սիրականս ես, դու, եթէ Աս-
տուած կամենայ՝ իմ ամուսինս պէտք է լինիս,
և շուտով։ Բայց առ այժմ լուռ կաց, պաղա-
տում եմ։

Այս առաւտոից յետոյ երկար շաբաթներ
անցան, և բոլոր այս ժամանակ Պառնան զի-
շեր և ցերեկ անցկացրեց Տաննասի անկողնի
մօտ և խնամում էր նորան առանց հանգիստ
առնելու։

Գիւղամիջով գնում էին երկու անցորդ.
մէկը կոյր էր, զինուորական վերարկու հագած,
պատուանշանը կուրծքից կախ արած. նորան
խնամքով առաջնորդում էր աղջիկը, և հան-
դիպողներին ասում էր բարեկամական ուրախ
ձայնով.

—Ահա իմ նշանածս. նա հերոս է. ահա
պատուի նշանը նորա կուրծքին։

—Եւ երեսին, աւելացնում էր Տաննաս,
մեղմիկ հառաչելով։

Նրանց հարսանիքը այնպէս ուրախ և
հանդիսաւոր եղաւ, որպիսին երբէք եղած
չէր։ Մօտակայ և հեռաւոր տեղերից մեծ բաղ-
մութիւն էր հաւաքուել՝ տեսնելու դեղեցկուհի

Պառնային՝ ձեռք ձեռքի տուած կոյրին։ Իսկ
Պառնան ծիծաղերես ասում էր ամենքին.

—Ես պարծենում եմ. իմ ամուսինս հե-
րոս է։ Փառք Աստուծոյ, ես այնքան ոյժ ու-
նիմ, որ երկուսիս համար էլ կարող եմ աշ-
խատել։

Այն սարը, որի վերայ բոց երևեցաւ՝ կո-
չեցին Պիտիպա-արքա (Աչրուած ապառաժ), որպի-
հետեւ հովիւներն ու որսորդները երդում անում
հաւատացնում էին, թէ այդ ապառաժը ածուխ
էր կտրել։



ՅԻՊԵԱՆ ԺԱՅՌԵՐԸ

Կարպատեան լեռնաշղթայի այն մասում, որ կոչում է Բուչեջի՝ հակայական ատամների նման երկինք են ամբառնում Յիպեան երկու սուր ժայռերը, որոնք միմեանց կողքին են գտնում և տրտում նայում են մէկը միւսի վերայ: Նրանց միջով փրփրելով և ջրեղին փոշի ցայտելով՝ ներքեի հովիտն է սահում Ուրշատօար ջրվէժը և դիմում է դէպի Պրախօվի կողմը: Պատմում են, թէ հին ժամանակներում Յիպերը երկուորեակ եղբայրներ էին, և այնքան սիրում էին միմեանց, որ մէկն առանց միւսին չէր կարողանում ապրել, և երբէք մի կտոր հաց բերանը չէր դնում, մինչեւ նորանից եղբօրն էլ բաժին չհանէր: Երբ եղբայրներից մէկին մի բան էին հարցնում՝ նորա փոխանակ միւսն էր պատասխանում: Եթէ մէկին որ և է ցաւ կամ մնաս հասնէր՝ միւսը սորա վերայ ողբում էր անմիտթար: Երկուքն էլ գեղեցիկ էին, ինչպէս վարդագոյն արշալոյսը

և շառագոյն երեկոն, երկուքն էլ բարակ և բարեկազմ՝ ինչպէս սօսի, արագ՝ նետի նման և ուժեղ՝ ինչպէս մատաղ արջեր: Մայրը պարծանքով նացում էր նոցա վերայ և նոցա գանգրահեր գլուխները գորովանքով շոյելով՝ սումբ էր.

— Իմ սիրուն որդեակներս, Անդրէաս և Միրէաս, գուք կարող էք այնքան հոչակաւոր լինել, որ ձեր մասին քարերն անգամ կխօսին: Նրանք ծագում էին ազնուական տոհմից և մի ամրոց ունէին բարձր ժայռի վերայ, որտեղ և ապրում էին, կարծես բոլոր աշխարհի տէրը լինէին: Պատանիները շատ անգամ ասում էին հանագով, թէ երեկի երկուսով մի կին պէտք է առնեն, որովհետեւ անկարելի է երկու բոլորովին համանման կին գտնել երկուսին: Բայց աւելի լաւ էին համարում ամենեին չամուսնանալ: Սակայն մայրը լսել անգամ չէր ուզում նրանց այս խօսքը. նա անպատճառ կամենում էր թռունիկներ ունենալ, ծնկան վերայ նրանց խաղաղացնել և օրօրոցի երգեր ասել:

Ծոկսանան, նրանց մայրը, շատ անգամ երեկոներին հնուցուայ երգեր էր երգում իւր որդոց համար: Մի անգամ նա մանում էր, իսկ պատանիները հանգիստ տեղաւորուել էին

նորա կողքին։ Անդրէասը ծունկ էր չոգել մի բարձի վերայ, որ դրուած էր մօր ոտների մօտ։ իսկ Միրէասը կոթնել էր մօր աթոռին և շընչում էր նորա մազերի ախորժելի բուրմունքը, որոնց երկու հիւսերը երեռւմ էին սպիտակ նուրբ ծածկոցի տակից։

—Մեր մայրը գեռ բոլորովին ջահիլ է, ասաց Անդրէասը։

—Ի հարիէ, պատասխանեց Միրէասը, նա գեռ ոչ մի սպիտակ մազ չունի։

—Եւ ոչ մի խորշոմ երեսին, աւելցրեց Անդրէասը։

—Ե՛ն, մրտեղ մենք կգտնենք քեզ նըման կանաչք, ասաց Միրէասը և համբուրեց մօր գլխի ծածկոցը։

—Խնչքան էլ լաւ կին լինի՝ այնու ամենայնիւ քո ներկայութեամբ կէս փող, աւելցրեց Անդրէասը ժպտալով և համբուրեց մօր ճկոյթը, որ հէնց նոր մանել էր մի ամենանուրբ թել։

—Ո՛րչափ բախտաւոր է եղել մեր հայրը, ասաց Միրէասը։

—Եւ ո՛րչափ բախտաւոր որդիներ ենք մենք, աւելցրեց Անդրէասը։

Մայրը ժպտում էր՝ այս գողտրիկ խօսքերը լսելով, և երեխաներին պատմում էր

նոցա մամի պատմութիւնը, թէ ինչպիսի խիստ ժամանակներում է նա ապրել, ինչպէս խստաբարոյ է եղել նորա հայրը և մանաւանդ ամուսինը։

Նոքա ձաշի և ընթրիքի էին նստում երեք հոգով, բայց այնպէս ուրախութիւն էին անում, որ մարդ կկարծէր, թէ ամրոցը լիքն է հիւրերով։ Խոկ երբ իսկապէս հիւրեր էին գալիս՝ այն ժամանակ տանտէրերը իրանց պահում էին և հանդարտ էին մնում, որովհետեւ այս էր պահանջում իրանց տան պատիւը։ Նոքա չափազանց հիւրասէր էին. յաճախ պատահում էր, որ իրանք գետնի վրայ էին պառկում, որպէս զի իրանց փափուկ անկողինները հիւրերին առաջարկեն։

Այն, ուրախ և անդորր էր կեանքն այս տան մէջ, որտեղ թագաւորում էր սէրը։

Մի անգամ եղբայրները որսի էին գնացել և անցնում էին ժայռի գաղաթներով. այստեղ մի արջ էին փնտում, որ դորանից քիչ առաջ շատ վլասներ էր պատճառել։ Վերջապէս նոքա գազանի հետքը գտան և մեծաձայն մռնչիւնից ու գլորուող քարերի շնկը կոցից հասկացան, որ նա հեռու չէ։

Այն միջոցին, երբ Միրէաս քաշում էր նիզակը արջի միեւալու պարագաներու համար՝ յան-



կարծ ցած թփերի ետևից դուրս թռաւ մի ուրիշի նիզակն և ցցուեցաւ արջի կողքում, որից յետոյ թփերի միւս կողմից լսուեցաւ ուրախ և բարձրաձայն քրքից: Արջը ետևի թաթերի վերայ ծառացաւ և զարհուրելի մոլնչինով դիմեց դէպի թփերը:

Անդրէան իսկոյն և եթ հասկացաւ, որ անձանօթ խիզախ որսորդի կեանքը մեծ վըտանգի մէջ է գոնւում:

—Թող ինչպէս սկսեց՝ այնպէս էլ վերջացնէ իւր որսորդութիւնը—սրտնեղած ասաց Միրէասը:

—Բայց միթէ դու չ՞ս տեսնում, որ այդ որսորդը մի երեխայ է, աղաղակեց Անդրէան իւր եղբօրը, և մի ակնթարթում արջի մօտ հասնելով՝ իւր լայնաշեղը դանակը մինչև կոթը լրեցրեց արջի ուսը:

Արջը մի ոստիւն գործեց և գետին դլորուեցաւ:

—Ա'խ, ափսո'ս, արտասանեց մատաղ ձայնը թփերի ետևից, և յետոյ երկու եղբայրների առաջ դուրս եկաւ մի հիանալի գեղեցիկ աղջիկ, կարճ շորեր հագին, ոտքին սանդալներ և գլխին սպիտակ մորթէ գլխարկ, որի տակից դուրս էին թափթափում խիտառխիտ թուխ դանդուները: Նորա աչքերը կանաչ

էին, ոսկէճաճանչ բիբերով և թանձր ու սև յօնքերով: Ուսին ձգած էր մի թիկնոց այծի մետաքսանման բրդից. ձեռքին բռնած ունէր մի գանակ, բոլորովին նման Անդրէասի ունեցածին, և ինչպէս երկում էր՝ սպասում էր արջի յարձակումին:

—Ա'խ, ափսո'ս, կրկնեց աղջիկը, արջը գլորել ինձ չվիճակուեցաւ:

Եւ նորա աչքերում երկեցան արտասուքի կաթիներ:

Անդրէասը շուարած կանգնած էր նորա առաջ, և այնպէս էր նայում արջի վերայ, որ կարծես կամենար նրան վերակենդանացնել, որպէս զի փոքրիկ գեղեցկուհու սիրտն առնէ:

Իսկ աղջիկը մօտեցաւ արջին և, ինքն էլ չհասկանալով թէ ի՞նչ է անում՝ ոտքով նրան բօթեց: Գազանը գոռաց և շարժուեցաւ տեղում:

Նոյն բոպէին մի հումկու ձեռք աղջկանը ետևից բռնեց և մի կողմ քաշեց, և մի ուժեղ ձայն յու զուած կերպով հնչեց նորա ականջին.

—Անմի՛տ երեխայ:

Միրէան էր այս անողը:

Աղջիկը զարմացքով նորա վերայ նայեց: Նա ապշեցաւ, նկատելով որ այդ ձայնը բոլորովին նման էր այն պատանու ձայնին, որ կանգնած էր իւր առաջ. բացի դորանից եր-

կուսի դէմքերն էլ բոլորովին նման էին մի-
մեանց: Նա, բերանը բաց արած, երկար նայ-
ում էր մէկի և միւսի վերաց, ինչպէս անում
են սաստիկ զարմացած երեխաները: Վերջա-
պէս երեքն էլ մի բարձր քրքիջ արձակեցին,
որ չէին կարողանում զսպել:

—Դուք կրկնակներ էք եղել, բացագան-
չեց աղջիկը. կարծես երկու ընկոյզ լինիք մի
պատեանից դուրս եկած:

—Հէնց այդպէս էլ է, ասաց Անդրէասը,
որ մենք մի պատեանից ենք դուրս եկած: Իսկ
դժու ով ես, անտառային յաւէրժահարս: Դու
անշուշտ կախարդ չես լինի, այդ հիանալի
կերպարանքն զգեցած, որպէս զի մեզ կորուսոր
տանիս:

—Ո՛վ գիտէ, կարելի է հէնց կախարդ էլ
լինիմ, պատասխանեց աղջիկը: —Պապս էլ նոյնն
է ասում: Ահա մի շաբաթ է, որ ես ապրում
եմ նորա մօտ, և այս ժամանակ նորա փորը
ոչ մի անգամ չէ ցաւել:

—Բաս որ այդպէս է՝ մենք քեզ հետ կը
վարուինք՝ ինչպէս կախարդի հետ, ասաց Սի-
րէասը ժամանով: Քեզ կձերբակալենք և գե-
րի կտանինք մեր ամրոցը այն պատճառով,
որ առանց թուլտուութեան որսորդութիւն ես
անում մեր կալուածքում:

—Մեր ամրոցում ապրում է մեր չար,
ամենաչար մայրը, աւելցրեց Անդրէասը:

—Մի՞թէ, բացագանչեց աղջիկը: Բաս ես
նրան կտեսնեմ, չէ որ ես ձեր գերին եմ:

Աղջիկը կանչեց իւր որսի սպասաւորին,
մի քանի յանձնարարութիւններ արաւ՝ իւր
պապին հաղորդելու համար, հրամայեց ձի բե-
րեն իրան յետ տանելու, և պատանիներին
ընկերանալով՝ ուրախ-ուրախ ամրոցը դիմեցին:

Մայրը պատուհանում նստած՝ սպասում
էր որդոց վերադարձին: Երբ նրանց հեռաւանց
տեսաւ՝ չկարողացաւ հասկանալ, թէ այդ ի՞նչ
հովիւ է, որ գալիս է որդոցը հետո: Նոցա
ետեից, ծառերի ճիւղերի վերայ ձգած՝ բե-
րում էին սպանուած արջը:

Բայց երբ նոքա մօտեցան՝ Ռոկսանան յու-
զուած ձայնով բացագանչեց.

—Տէ՛ր Աստուած, դա հովիւ չէ, այլ մի
աղջիկ է: Ո՞րտեղ դրան գտան:

Մի քանի րոպէից մատաղ ձայներն ու
թեթև քայլերը լսուեցան նախ բագում, յե-
տոյ սրահում վերջապէս գահլիճում:

—Մայրի՛կ, դոչեց Սիրէասը, քեզ մի ՅԱՄԷ. ԵԿԱ
րի ենք բերել, որ մեր որսը խանգարեց ինչ աշ-
պէս պէտք է նրան պատժել:



Յոկսանան ներքին յուղումով նայեց աղջկայ վերայ, և շատ ուրախ կլինէր՝ եթէ նա իսկոյն և եթ հեռանար: Բայց անծանօթ գեղեցիուհու դէմքն այնպիսի գրաւիչ արտայայտութիւն ունէր, որ Յոկսանան սիրալիր կերպով ժպտաց և ձեռքը մեկնեց աղջկան, որ նա ակնածութեամբ համբուրեց:

—Ես կարծեմ, որ այս ապօրինի որսորդի համար ամենալաւ պատիմն այն կլինի, որ նրան սոտիպենք մի քանի ժամ թել մանել ինձ նման պառաւին հետ:

—Ո՛չ, դա ինձ համար պատիժ չի լինի: Ես կարող եմ շատ բարակ մանել: Նիփակ բըռն! լույ ձեռներս գեռ չեն կոշտացել: Ինչ վերաբերում է իբրև պատիժ ձեզ հետ նստելուն՝ այս ասեմ, որ ես միշտ մենակ եմ ապրում իմ պապիս հետ, որ ամբողջ օրերով թիկնաթոռից վեր չէ կենում, և հէնց որ ես նորան սկսում եմ մի բան պատմել՝ իսկոյն ննջում է:

Այսպէս իրույն աղջիկը թիկնոցը հանեց և կամենում էր մի կողմ զնել, բայց Անդրէասը փութաց, քաղաքավարութեամբ նորա ձեռքից առաւ: Ինքը Յոկսանան վերցրեց նորա գլւխից մորթէ գլխարկը և փաղաքշանքով յետ արաւ նորա ճակատին կպած գանդուր մազերը:

Աղջիկն այս կերպով աւելի գեղեցիկ երևեցաւ, և մայր ու որդիք նորա վերայ նայում էին զմայլած:

—Բայց ի՞նչ է քո անունդ, իմ սիրուն որդեակ, հարցրեց Յոկսանան:

—Իմ անունս է Ուրլանդա. —տգեղ անուն է, այնպէս չէ: Ինձ կամեցել են Ռոլանդա կոչել, բայց ես այնպէս չարաճճի եմ եղել և այնքան չարութիւններ արել՝ որ Ռոլանդան փոխել են Ուրլանդայի:

Այս պատմութիւնը նա արաւ այնպիսի զաւշտական լրջութեամբ, որ բոլորը ծիծաղից թուլացան:

—Պապս այս սարերի միւս երեսին է սպրում: Այսօր ես մեր տանից շատ հեռացայ:

—Եթէ այդպէս է՝ ուրեմն հազիւ թէ կարողանա ձեր տանը շուտով ճաշել. իսկ մեր ճաշը պատրաստ է: Գնանք միասին ճաշենք:

Մտան սեղանատուն: Բոլոր պատերն այստեղ ծածկուած էին արևելքի թանկագին գորգերով, իսկ թարաքներում շարուած էին փառաւոր արծաթեաց սպասներ:

Երկու պատանիները չափաւորութեամբ խմում էին ջրախառն գինի, իսկ կանաչք գինուն ամենեին ձեռք չտուին: Խօսակցութիւնը սեղանի վերայ շատ ուրախ էր և հետաքրքրա-

կան։ Երկու եղբայրները պատմում էին արջի որսորդութեան վերաբերեալ զանազան դիպուածներ, մէկը քան միւսը զարմանալի։ իսկ Թոլ'անդան կարծես պատրաստ ունէր իւր կողմից աւելի զարմանալի պատմութիւններ, որոնք հաղորդում էր ունկնդիրներին այնպիսի փստահութեամբ ու լրջութեամբ, որ կարծես պատրաստ է երդուել, թէ իւր պատմութեան ամեն մի բառը ճշմարտութիւն է։

Նա շատ զուարձանում էր նորանով, որ երկու եղբայրներին անդադար շփոթում էր, մէկին ընդունելով միւսին տեղ։ Երբ Անդրէամն ասաց, թէ ինքը նորա կեանքը փրկեց, իսկ Միրէասը շարունակեց, թէ նր սն ազատեց արջի օրհասական գրկամսառնութիւնից՝ նա պատասխանեց։

— Աւ, ուրեմն այնպէս գիտնանք, որ երկուսդ էլ ինձ մահից ազատեցիք. ապա թէ ոչ ես երբէք չեմ կարողանայ զանազանել, թէ ձեզանից որն է իմ ազատարարս։

Ճաշից յետոյ նա ինդրեց, որ իրան ճախարակ ու բուրդ տան մանելու։ Ես կամենում եմ ապացուցանել, որ գոնէ մանելու մէջ վարպետ եմ, եթէ ոչ արջի որսորդութեան մէջ», ասաց նա, խորամանկ ժպիտով եղբայրներին վերաց նայելով։ Եւ յիրաւի, նորա մատ-

ների տակից աննման թել էր դուրս գալիս, նուրբ, հաւասար, սարդի ոստայնի նման, այնպէս որ Տոկսանան մնաց հիացած։

— Ես ասղնագործութիւն էլ շատ լաւ գիտեմ; ասաց աղջիկը. — մայրս է սովորեցրել։ Նա աննման ասղնագործում էր, և յոյս ունէր, թէ այսպիսի գեղեցիկ գործը կկարողանայ մեղմացնել իմ անզուսպ բնաւորութիւնս։ Բայց ես իմ գործս նորա ենթադրածից աւելի կանուխ էի վերջացնում. և նա հազիւ կարողանում էր շուրջը նայել, որ ինձ—վնտոփիր որ գտնես. ես կամ ձիարանումն էի արդէն լինում կամ որագութեան մէջ։

Նա կանգ առաւ և տխուր յոգոց հանեց։

— Այժմ ձիարանը ծախուած է. բացի դորանից՝ այս անպիտան սարերում ձի քշելու տեղ էլ ամենեին չկայ։ — Այս, ձիերն էլ եկան. Ժամանակ է գնալու, ապա թէ ոչ մինչև մութն ընկնելը չեմ կարողանայ տուն հասնել. իսկ իմ պապս գիտէ լաւ շարանալ՝ երբ որ կամենում է. ախար այնպէս խիտ ու կախ ընկած յօնքեր ունի և այնպէս խորշոմած ճակատ։

Նա վեր թռաւ աթոռից, վազեց Տոկսանայի ձեռքը համբուրեց, երկու եղբայրներին մնաք բարով արաւ իւր սպիտակ գլխարկի շարժումով, որը իսկոյն գանդուր գլուխը դրեց,

քամու թեխեռւութեամբ դուրս թռաւ դահլի-
մից և տղայի նման մի ոստիւնով հեծաւ ձին:

Երկու եղբայրներն էլ իրանց ձիերը պատ-
րաստել էին տուել, որ մանկամարդ հիւրին ճա-
նապարհ ձգեն մինչեւ իրանց կալուածքի սահ-
մանագլուխը: Երեքն էլ ծիծաղն երեսներին,
բարեւեցին Ռոկսանային, որ պատուհանից նայ-
ում էր նոցա վերայ լուրջ հայեացքով, բայց
ժպիտն երեսին: Նորա սիրոն անհանգստութեան
մէջ էր, և ինքն էլ չգիտէր, թէ ինչու այնպէս
ցանկութիւն էր զգում որդոցը յետ կանչելու:

Բոլ'անդան անսպատճառ ուզում էր սրար-
շաւ ընթանալ սարերն ի վեր և սարերն ի
վար. և եղբայրները հազիւ հազ կարողացան
նրան համոգել, որ յետ կենայ այդ մտադրու-
թիւնից: Երկուսն էլ խնդրում էին նրան, որ
գոնէ ձիերին խնայէ: Նա վերջի վերջոյ հա-
մաձայնեցաւ, բայց հառաչելով ասաց.

—Եւ դուք ձի էք կոչում այս շարժուն
աթոռները:

Արդէն մութն ընկել էր, երբ ուղևորները
հասան Ռոլ'անդայի պատի տունը. աղջիկը երի-
տասարդներին ներս հրաւիրէց:

Ծերունին նստած էր վառարանի առաջ
և շոյում էր իւր ալեոր մօրուքը, որ գրեթէ
նորա ամբողջ կուրծքը ծածկում էր:

—Այդ հւր մնացիր, իմ քաջ որսորդս,
հարցընց նա բարեմտութեամբ:

—Ո՛հ, սոսկալի գերութեան էի մատ-
նուել, որովհետև զանց էի արել որսորդական
օրէնքները: Ահա և իմ գերիչներս, որոնք եկել
են տեսնելու, թէ ձշմարիտ են այն բաները,
որ ես նոցա պատմեցի իմ մասին:

Ծերունին քաղցրութեամբ նայեց երիտա-
սարդների վերայ, որոնք ակնածութեամբ կանգ-
նել էին նորա առաջ: —Նուտով ընթրիք բե-
րին, որ նոյնչափ ուրախ անցաւ՝ ինչպէս և
ճաշը Ռոկսանայի մօտ:

Երբ արշալյար բացուեցաւ՝ Անդրէան ու
Միրէասը ձի հեծան: Յանկարծ վերևում տան
պատուհանը բացուեցաւ, և երիտասարդների
վերայ տեղաց ծաղիկների մի տարափ: Եղ-
բայրները գլուխները վեր բարձրացրին, բայց
պատուհանը իսկոյն և եթ փակուեցաւ, այն-
պէս որ ոչ ոքի չտեսան:

Այս օրից սկսեալ Բոլ'անդան և երիտա-
սարդները յաճախակի միմեանց հետ տեսնեում
էին, միասին որսի էին գնում, ձիով զբօսանք-
ներ էին կատարում, կամ տանը նատած ուրախ
խօսակցութիւններ էին անում:

Երբեմն Բոլ'անդայի վերայ մի տեսակ տըխ-
րութիւն էր գալիս, և այս ըոսէներին նա

աւելի հրապուրիչ էր լինում։ Նա յիշում էր իւր ծնողներին և տրտմագին ասում, թէ ինքը մէն-մենակ է աշխարհիս երեսին, թէ իւր պապը երկար չէ կարող ապրել, իսկ թէ նորանից յետոյ որտեղ պէտք է ապրի, որտեղ բոյն շինէ իւր գլուխը դնելու—այդ ինքն էլ չգիտէ։

—Այդպէս ասելով գրւ մեզ կարգին վիրաւորում ես, ասաց մի անգամ Անդրէասը. հապա մենք քեզ համար եղբայր չենք, հապա մեր տունը քեզ համար էլ մայրական տուն չէ։

—Հապա մեր մայրը քեզ չէ սիրում, աւելցրեց Միրէասը։

Իոկսանայի սիրտը դարձեալ ճմլուեցաւ ինչոր ներքին երկիւղից. բայց այսու ամենայնիւնա հոգով չափ սիրում էր այս կենդանի և աշխոյժ երեսային։

Այս խօսակցութեան վերայ շատ ժամանակ չէր անցել, որ մի անգամ սարի վերայ լսուեցաւ ձիու ոտքի ուժգին տրոփիւն, որ գէպի ամրոցն էր մօռենում, և յանկարծ Իոլ'անդան սրարշաւ բակը մօռաւ։ Նորա գլխարկը չկար, և գանգուր թուխ մազերը խառնակուել էին գլխի վերայ։ Աղջիկը մեռելի նման դժգոյն էր։ Նա վազեց Իոկսանայի մօռ։

—Աստծու սիրուն, ինձ ձեզ մօռ ընդու-

նեցէք, ասաց նա։ Իմ պապս մեռաւ։ Ես նորա աչքերը փակեցի, լուացի, հազցրի, դադաղը դրի և թաղեցի—և իսկի չվախեցայ։ Բայց այժմ մեր տունն են եկել մեր ազգականները—մի կատարեալ աւազակային խումբ։ Նոքա վիճում են, կուռում են պապիս թողած ժառանգութեան համար, հայնոյում են, տրտնջում են, որ նա մի փոքր բան է թողել ինձ համար. իսկ մէկը, մի քաշալ, անպատճառ ուղղում է ինձ առնել, Ե՛լ այս անգամ վախեցայ։ Մէկ գիտնայիք ի՞նչ այլանդակ դւե է։ Ուհուհուհուհու։ Սակայն ես նորան ասացի, թէ իմ անունս Ուրլ'անդա է, թէ ես այնպիսի չարն եմ, որ ինձ հետ ոչ ոք չէ կարող ամուսնանալ։ Եւ ինչիս է պէտք ամուսին։ Իսկի ինձ հարկաւոր չէ։ Ես ձեզ մօռ կապրիմ այնքան ժամանակ՝ որչափ որ ինձ կապհէք։

Իոկսանան դժուարութեամբ ըմբռնեց յուղուած աղջկան այս կցկոտուր խօսքերի հոսանքը։ Նորան փաթաթուեցաւ, սեղմեց իւր կուրծքին, քնքշաբար շոյեց նորա խառնակուած գանգուրները, յետոյ նրան տարաւ մի փոքրիկ սպիտակ սենեակ, որտեղ ինքն էլ երբեմն ապրում էր, և ասաց, թէ այդ սենեակը Իոլ'անդայի բնակարանը կլինի մինչեւ այն ժամանակ, քանի որ ամրոցի վերայ ծածկ կայ։

Բոլ'անդան վագեց փաթաթուեցաւ Բոկսանացին, նորա ձեռներն համբուրեց և խոստացաւ, որ հեզ ու հանդարտ կլինի, ինչպէս մի մեծ հանդարտ լիճ: Բոկսանան ժպտալով նկատեց, որ հեզութիւնն ինքն իրան կդայ, երբ նա կին դառնայ:

—Ես ամենեին չեմ ուզում կին դառնալ տաքացաւ Բոլ'անդան. ես ընդ միշտ աղջիկ պէտք է մասմ, ես ուզում եմ թռչունի նման ազատ լինել:

Բոկսանան մեղմ յօդոց հանեց և սկսեց ականջ անել որդոց ձայներին: Նրանք հէնց նոր տուն էին վերադարձել և ամեն բանից առաջ Բոլ'անդացի մասին հարցրին, որովհետեւ հեռուանց տեսել էին, որ նա սարի վերայով ձին քշելով ամրոցն էր դալիս:

Սկսած այս օրից, երբ Բոլ'անդան Բոկսանացի տանը բնակութիւն հաստատեց՝ երկու եղբայրների վարմունքը փոխուեցաւ: Այս առաջին անդամ նրանք Բոլ'անդացին բարեկցին, ինչպէս իրանց կրտսեր քրոջ, բայց սա շատ շփոթուեցաւ ու կարմրեց: Այնուհետեւ նոքատան այնքան յաճախ չէին մնում, ինչպէս առաջ, և տանից հեռանում էին ոչ թէ միասին, այլ ջոկ-ջոկ: Բոլ'անդան մեծ մասամբ

մօր հետն էր նատած լինում, տխուր էր և ուշքը ցրուած և յաճախ ծածուկ լաց էր լինում: Երբ նա վստահ էր լինում, թէ ոչ ոք իւր վերայ ուշադրութիւն չէ դարձնում՝ զըննողական հայեացք էր ձգում փոփոխակի երկու եղբայրներին վերայ, կարծես թէ կամենար որոշել հասկանալ մի բան, որ գաղտնի, անհասկանալի էր նորա համար: Մինչեւ այժմ էլ նա շատ անդամ եղբայրներին շփոթում էր մէկը միւսին հետ, բայց հիմա այլևս չէր ծիծաղում դորա վերայ, այլ անվստահ հայեացքը գէպի մայրն էր ուղղում:

Բոկսանան դառնացած հոգով գուշակում էր, որ իւր տան վերայ մեծ փոթորիկ է գալու, և Բոլ'անդացի նման ինքն էլ յաճախ արտաւում էր: Վերահաս չարիքը նա որոշ հասկացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ որդիներից իւրաքանչիւրը երեկոյեան մութնուլուսին իւր սիրտը նորա առաջ բաց արաւ և յայտնեց, որ խելագարի պէս սիրահարուած է Բոլ'անդացին:

—Ի՞նչ ես կարծում, մայրիկ, եղբայրս նոյնպէս նրան սիրում է, հարցնում էր իւրաքանչիւրը: Վերջի ժամանակներս նա այնպէս փոխուել է: Ա'խ, արդեօք որիս պէտք է ընտրէ աղջիկը:

Թոկսանան յաճախ գնում՝ էր Նեսպէսի փոքրիկ մատուռը, որ շինուած էր սարի վերայ, ջերմեռանդ աղօթք էր անում և մոմ վառում պատկերների առաջ։ Նա աւելի հեռու տեղ ուխտ գնաց, հարձրեալի օգնութիւնը հայցելով, որ սպառնացող գժբախտութիւնն հեռացնէ իւր տան վերայից։

Թոլ'անդան նոյնպէս սաստիկ յուզուած արէկոծուած էր։ Միւնոյն օրը Անդրէանն ու Միրէասը, մէկը միւսից ծածուկ, սրան յայտնել էին իրանց սէրը, և խեղճ աղջիկը քըննում էր իւր սիրտը, բայց պատասխան չէր ստանում։ Երկու եղբայրներն էլ հաւասարապէս նորան սիրելի էին, որին ընտրէր և որին գժբախտ դարձնէր։ ինչպէս նորա աչքերը՝ նոյնպէս և սիրտը երկուսին շփոթում էր միմեանց հետ։ Եղբայրների այս խոստովանութիւնը նա չյայտնեց Թոկսանացին, որպէս զի նրան չըլտացնէ, բայց սարսափով նկատում էր, որ եղբայրներն այլևս միմեանց չեն սիրում և մինչև անգամ կծու խօսքեր են ուղղում իրարու։

Մի անգամ Թոկսանան երեքին էլ իւր մօտ կանչեց և ասաց.

— Խիստ երկար համբերեցի ես, դիաելով այն ծանր կոիւը, որ մզւում է ձեր մէջ և ձեր սրտերը հալումաշ անում։ Զեզանից մէկն

ու մէկը պէտք է զոհաբերութիւն անէ միւս երկուսի երջանկութեան համար։

— Այն, մեզանից մէկն աշխարհիս երեսին ապրելիք չունի, արտասանեց Միրէասը խունայնով։

— Յանուն Աստուծոյ, աղաղակեց Թոլ'անդան, իմ պատճառով միմեանց հետ մի՛ կոռուիք։

— Ի՞նչ հարկաւոր է, ասաց Անդրէասը դառն ժպիտով. այդ բանն առանձին էլ կարելի է անել։

Թոկսանան զայրացած՝ ձեռները բարձրացրեց.

— Ո՞վ դուք, անսիրտ, անաստուած որդիք, դորա համար ես ձեզ ծնաց և մեծացրի, որ այդպէս թուլասիրա լինիք, որ ձեզանից ոչ մէկը սիրտ չէ անում մի ծանր վշտի դիմանալ։ — Թոլ'անդա, քեզ մի օր միայն ժամանակ եմ տալիս, խորհրդածիր և վճռիր։ Իսկ մինչեւ վաղը պինդ կաց և արիացիր։

Երիտասարդները միմեանցից բաժանուեցան։

Անդրէասը անտառի կածանը բռնեց Նեսպէս գնաց. այնտեղ ապաւաժի վերայ մատունի առաջ ծունկ չոգեց և աղօթեց այսպէս։

— Տէր Աստուած, դու ճանաչում ես իմ սիրտս և ոյժս։ Դու ինձ պահպանիր, որ մեղք

չգործեմ ինքս ինձ դէմ, ոչ մօրս, ոչ եղբօրս
և ոչ այն կնոջ դէմ, որին սիրում եմ: Իսկ
եթէ նա ինձ ըընտրէ՝ Դու ինձ քար դարձրու,
որ այլ ևս ոչինչ զգալ չկարողանամ:

Միրէան էլ նոյն մատուռը դիմեց, նոյն-
պէս ծունկ չոգեց և նոյն աղօթքն արաւ Աստ-
ծու: Եղբայրները տխուր միմեանց վերայ
նայեցին և առանձին ճանապարհներով տուն
դարձան: Ամեն մէկը մտածում էր, թէ իրան
է վիճակուելու գորաբերութիւն անելը:

Միւս առաւօտ երբ Ռոկսանան որդոց մօտ
եկաւ՝ երեսը գունատել, գլխի ծածկոցի գոյնն
էր ստացել: Նորա թուխ մազերի մէջ առաջին
անգամ սպիտակ մազ էր երևում:

Եղբայրները այնպիսի արտայալտութիւն
ունէին, որ կարծես մահուան դատապարտուած
լինէին: Միայն Ռոլ'անդան էր որ գուրս եկաւ
ուրախութեամբ փայլող հայեացքով: Թւում
էր, թէ ինչ-որ շնորհ էր իջել նորա վերայ,
որով նա աւելի էր չքնաղացել: Կարծես՝ նա
այդ գիշեր մի թիզ բարձրացել էր, և նորա
ձայնն աւելի ներդաշնակ էր հնչում:

— Դուրս գանք սենեակից, իմ միակ սի-
րելիներս, ասաց նա: Այսպիսի վճիռները պէտք
է արտասանել բաց երկնքի տակ, Աստծու հան-
գէպի

Նա գնում էր ամենի առջեկից, կարծես
օդի միջով սահելով. Նրա ձեռները մեղրամոմի
նման թափանցիկ էին, իսկ դէպի երկինք ուղ-
ղած աչքերը արտասուալից էին: Գահավէժ
ապառաժի եզրը հասնելով նա ծունկ չոգեց
Ռոկսանայի առաջ և ասաց:

— Օրհնիր ինձ, մայրիկ:

Ռոկսանան իւր դողդոջուն ձեռները դրեց
նորա սիրուն գանգուր գլխի վերայ:

— Իսկ հիմա, արտասանեց Ռոլ'անդան հըն-
չուն ձայնով, հիմա ինձ լսեցէք: Ես սիրում
եմ ձեզ երկուսիդ էլ, սիրում եմ սաստիկ, ան-
շափի: Միրում եմ շատ աւելի քան ինքս ինձ և
իմ կեանքս. ուստի չեմ կարող ընտրել մէկիդ
կամ միւսիդ: Իմ ամուսինս կլինի նա՝ ով ինձ
ձեռք կբերէ, կհանէ անդունդից:

Եւ առաջ քան մէկը տեղից կարողացել
էր շարժուել՝ նա արդէն գահավէժ թռչում էր
դէպի անյատակ անդունդը: Եւ... ով հաշք.
Ռոլ'անդան յանկարծ ջրվէժի փոխարկուեցաւ,
որ թափուելով մանր փոշի էր դառնում և
օդի մէջ բարձրանում կանանց սպիտակ ծած-
կոյթի նման:

Եղբայրները կամեցան նետուել նորա ետե-
ւից, բայց տեղերում կպան մնացին կաշկան-
դուած: Նոցա ոտները, ձեռներն ու սրտե-

ըլքար կտրեցան, և իրանք էլ բարձր ժայռի փոխուեցան, որոնք արտում գէպի երկինք էին ձգտում:


Թշուառ մայրը ձեռները մեկնեց բազկատարած և բարձր ձայնով աղաղակեց.

—Ո՞հ, միթէ ես մենակ պէտք է կենդանի մնամ: Ո՞վ երկինք, միթէ դու գութ չունիս:

Նա գետին թաւալուեցաւ և անհուն թախիծով՝ գրկեց վշտից քարացած երկու զաւակներին: Եւ ահա այդ տեղում, որտեղ ընկած էր նա՝ դուրս եկաւ կանաչ սիրուն մամուռ: Նա հետզհետէ տարածուեցաւ բալճրացաւ, մինչև որ երկուորեակ-ժայռերի մինչև կէսը հասաւ ու պատեց:

Եւ այսպէս մնում են նոքա և յաւիտեան էլ կմնան—և' սպիտակ, հարսի նման կայտառ Ռւրլատօար ջրվէժը, և' միմեանց զոհաբերութիւն չանող Յիպիա եղբայրները, և' նոցա գորովագութ մայրը:

- 27 Ուղղեցոյց գործնական շերամապահութեան. կ. Մելիք-Շահնազարեանցի. — 40
 28 Ժամանակապրութ. Հայոց Յ. Դարդելի. 1 25
 29 Վարդ-Խէսլի. Սպիրի. թարդ. ի. Յ. — 10
 30 Նալ և Դամակեանթի. Յ. Շմիգոլի . — 20
 31 Աստաւած զիտէ արդարն ու մեղաւորը կոմ լ. Տոլստոյ. թարդ. Մ. Ա. . — 7
 32 Հաւատարիմ Սավիտրին. Վալենէրի . — 10
 33 Լինհարդ և Գերարուդ. Պետալոցյի . — 25
 34 Յաելուած ի գիրս պատմութեան Ասոդկան Նորագը Բիւզանդացի. . . — 20
 35 Նաւի գոփրաւորը. Մ. Ռոզենհանի. . . — 15
 36 Ուռենց Ցովսէփի, Ե. Սպիրի. թարդ. ի. Յ. — 15
 37 Մեծապատիւ Մուրացկ. Յ. Պարսնեանի — 40
 38 Ազգավին Չոջեր. Յ. Պարսնեանի. . 1 —
 39 Բլ-ա-բա, Է. Օժէկովի. . . . — 15
 40 Շնիկ. Կուլիկովակի. . . . — 5
 41 Շնեդրինի երեք զրայներ — 10
 42 Տարասկոնցի Տարտարէնը. Գողէի . . . — 40
 43 Օրէանի Կուսը, Օտարոգորսկու — 25
 44 Արարատսկու Խնքնակենսագրութիւնը — 75
 45 Գաղափարական քահանակ, Պոտակինկօ. — 75
 46 Ընտանիքի բուը Անսենսկաչա — 10
 47 Հոսհոսի Ճեռատերը Յ. Պարսնեանի . 1 —
 48 Քիմիա Ռոսկովի, թարգմ.Ա. Մելիք-Ալլահի. — 40
 49 Շնեդրինի երեք վեպիկ, թ. Մ. Ղազարեան — 15
 50 Սասմակ ծահը, Գարեգին սարկ. . . . — 50
 51 Զաւախիքի բուրմունք, Ե. Լալակեանցի. — 25
 52 Դատուիարակութիւն Սպինսերի 1 —
 53 Մըռառն. Օ. Ի. Շմիգոլ թ. Ա. Քալանթար — 25
 54 Խան-Միրան գրեց Սէլան — 20
 55 Տարաս-Բուլբա Ն. Գոգոլի — 40
 56 Փրանքներ, Գ. սարկ. Ցովսէփեան. . . . — 50
 57 Երշկու քոլը, Ղ. Աղակեանց. . . . — 25
 58 Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ — 60
 59 Միրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ — 50
 60 Փորձանքների բժշկարան Բրօքերի . . . — 20
 61 Մակրէթ, Շէքսպիրի թ. Ա. Մալխասեան. — 50



- 62 Պաստեր, Ա. Բալաղեանի և Ա. Քալանթարի — 20
 63 Խոլերա, բժ. Վ. Արծրունու . . . — 5
 64 Խարազի տղայ, Ս. Քամալեանի . . . — 40
 65 Հանրամատչելի բնախօսութիւն Վ. Լուն-
 կեվիչի. թարգմ. Կ. Գիւլնազարեան . . . 1 —
 66 Փարաւոնի աղջիկը. էքերսի թարգմ. Պ.
 Շահրուդաղեանի — 80
 67 Խուն-խոր. Յ. Ղազարեանցի — 60
 68 Էլգուշա վէպ թարգ. Տ. Փիրումեանցի . . . — 45
 69 Զորբորդ մազը. Վահ-Դէկիլի — 5
 70 Երախտի ըստանիք, Խրիմեան Հալբիկի — 50
 71 Սիրաք և Սամուէլ, Խրիմեան Հալբիլի — 50
 72 Զրուցներ հողի մասին Ս. Բալաղեանի . . . — 15
 73 Ասողաբաշխութիւն Ֆլամարիոնի . . . 1 —
 74 Մանուկների հոգատարութիւնը Ե. Ա. Պոկ-
 րովսկիս, թարգ. բժ. Թ. Զաքարեան . . . — 20
 75 Մուկուչի հաւիկը, Պ. Նեղվանօվ — 15
 76 Երկու հեքեաթ, Կարմեն Սիլվակի. — 10
 77 Կովկասի գերին, Լ. Տոլստօվ թարգմ. Պ. Պ. — 20
-

ՀՀ Ազգային գրադարան



NL0585680

